

Նախընտրական քարոզարշավի տեքստը՝

“Ուշադրություն.

Համաձայն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19 հոդվածի պահանջների Ռադիո Հայ ռադիոկայանը սահմանում է եթերաժամի մեկ րոպեի զինը 3300 ՀՀ դրամ ներառյալ ավելացված արժեքի հարկ, որը մնալու է անփոփոխ մինչև նախընտրական քարոզչության ավարտը:

Ապրիլի 8-ից մայիսի 4-ը ներառյալ Ռադիո Հայ ռադիոկայանը թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար 8:30-ից մինչև 20:30 յուրաքանչյուր ժամի կեսին տրամադրելու է հնարավորություն տեղադրել մինչև 1 րոպե տևողությամբ գովազդային հոլովակ: Հոլովակների ընդհանուր տևողությունը մեկ օրվա ընթացքում չպետք է գերազանցի 12 րոպեն: Մայիսի 1-4 ներառյալ 18:30 և 20:30 ռադիոկայանը տրամադրելու է 15 րոպե տևողությամբ նախընտրական քարոզչությանը վերաբերող 2 –ական եթերաժամ:

Թեկնածուի, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից միջոցառումներ չկազմակերպելը կամ այդ միջոցառումների մասին տեղեկատվության բացակայությունը հիմք չէ զանգվածային լրատվության միջոցի համար ընտրությունների մյուս մասնակիցների քարոզարշավի մասին տեղեկություններ չհրապարակելու համար:”